



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ՏՆՏԵՍԸ ԵՒ ԲՆԸ

ԳԻՏԵԼԵԱՅ

ԺԱՅԱՐԻ ԹԻԻ Ծ.

1853

ՄԱՐՏ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ,

Մարդու դատաստանը և դատաստանի տարրեր :

ԱՅ անգամ մարդուն արդարա-
յուզածը լստուած կը պատժէ . և շատ
անգամ ալ լստուածոյ պատժածը մարդս
կ'արդարացնէ : Լսկից կը հետեւի որ ա-
սոնց գործածած օրէնքնին ալ իրարմէ
տարբեր ըլլան , բայց այնպէս չէ . մի և
նոյն աստուածադիր բնական օրինաց
վրայ հիմնած՝ լստուած և մարդ մէկ
մէկու հակառակ կը գործեն :

Լստ խօսքս ինծի յանդուգն զուր-
յուածք մը կ'երևայ . և այսպէս ընդհա-
նուր ըսելով՝ մարդկութեան մեծ նա-
խատինք մը տալ կ'ըլլայ . իբրև թէ
մարդ լստուածոյ դրած օրէնքէն ուրիշ օ-

րէնք մը կը գործածէ . այդ բանը ոչ
ոք կ'ընդունի : Բայց թէ ըսես որ եր-
կուքն ալ նոյն օրէնքը կը գործածեն ու
վճիռնին մէկմէկու հակառակ կու տան .
և այդ դարձեալ կը նշանակէ՝ թէ մարդ
լստուածոյ դէմ ելած , անոր գէշ ըսածին
աղէկ կ'ըսէ , և աղէկ ըսածին գէշ :
Սակայն այդ ալ ճշմարիտ չէ . ուրեմն
կը հետեւի ըսել թէ սուտ է այդ խօսքդ .
բանը նայէ որ այդ խօսքն ալ սուտ չէ :
Ուրեմն այդ մէկ խորունկ քննութեան
նիւթ մըն է :

Եթէ սուրբ Վիթթը չվկայէր այդ
խօսքիդ ճշմարտութեանը , յիրաւի դը-

ժուարին պիտի ըլլար ատոր լուծմունք տալը . բայց կը տեսնենք որ սուրբ գիրքը մէկ համառօտ վճռական խօսքով մը կը յայտնէ այս գուրցուածքիս ճշմարիտ ըլլալը, միանգամայն մեկնութիւնն ալ կուտայ, այսպէս ըսելով . « Եւրդ հայի յերեսս, այլ Եստուած հայի ի սիրտս » : Եւրդ մը դատաստանի կու գայ որուն դատաւոր նստեր են մէկ կողմանէ Եստուած, մէկալ կողմանէ ալ մարդը . Եստուած ան դատուողին սրտին նայելով վճիռը կուտայ, և մարդը անոր երեսը նայելով նոյնպէս վճիռը կուտայ : Ի՞նչպէտ երկուքն ալ նոյն օրէնքը կը գործածեն և նոյն վախճանը կը դիտեն, բայց մարդուս դատաստանը Եստուծոյ դատաստանէն տարբեր կ'ելլէ . որովհետեւ մէկը երեսը կը նայի և մէկալը սիրտը :

Եստուած և մարդ երկու այլ և այլ մաքսապետներ ըլլալին մէկ մաքսատան մը մէջ . երբ սնտուկ մը մարդ մաքսապետին առջևը կը բերեն, սնտուկը առանց բանալու վրան չորս դին աղէկ մը կը նայի, բերողին կը հարցնէ մէջը ինչ ըլլալը, ու առած պատասխանովը դո՛հ կ'ըլլայ ու կը թողու որ տանին : Իսկ Եստուած մաքսապետին առջևն որ սնտուկը կը հասնի, մէկէն կը տեսնէ ու կը նայի ինչուան տակը, ու այնպէս ըստ օրինաց սնտուկը կ'արգիլէ կամ կը թողու : Յայտնի է որ Եստուծոյ ըրածը շիտակ կ'ըլլայ, իսկ մարդունը խիստ շատ անգամ սխալ :

Եթէ այս այսպէս է . ուրեմն մարդուս դատաստանը Եստուծոյ դատաստանէն տարբեր է ըսելէն երկու բան կը հասկըցուի . մէյմը թէ մարդուս ըրած դատաստանները, թէպէտ և օրէնքով ըլլայ, շատ անգամ անիրաւ են : Եւ երկրորդ թէ մարդու մը կամ դատաւորի մը արդար դատաստան ընելու համար բաւական չէ արդար իրաւացի օրէնքներ ունենալը, պէտք է որ գիտնայ արդար քննութիւն ընելը : Եւս երկու ճշմարտութիւններուն առջինը ամենուն ծանօթ է, իսկ երկրորդը ամենուն սովորելու հարկաւոր նիւթ մըն է . և որ

չափ աւելի հարկաւոր է, այնչափ աւելի գրեթէ ամենուն անծանօթ է :

Եւջի մասէն՝ որ ամենուն ծանօթ է ըսինք, կը հետեւի թէ մարդկանց մէջ երբ դատաստան մը կ'ըլլուի ուրիշի գործոցը վրայ, աւելի դիւրին և ապահով է այն դատաստանին ծուռ եղած ըլլալն հաւաստել ու չաւտալ, քան թէ շիտակի տեղ դնելով այն եղած դատաստանը ու ընողին հետ մէկտեղ մուրեւելու վտանգի մէջ իյնալ : Բայց մտքերնիս այսպէս դրած՝ մարդկանց մէջ եղած ամէն դատաստաններն ալ արհամարհելը՝ մեծ շիտակութե պատճառ է աշխարհիս մէջ : Ուրեմն այս բանիս մէջը գտնելու համար խիստ հարկաւոր է գիտնալ արդար քննութիւն ընելը . որպէս զի երբ մարդ մը ուրիշի վրայ դիմացինէն խօսք մը կը լսէ գէշ կամ աղէկ, կարենայ որոշ գաղափար մը ըմբռնել, խօսողին կերպէն անոր միտքը հասկընալ, և կարենայ դարձեալ իր մտացը մէջ ուղիղ դատաստան ընել, և չկրցած տեղը ապահով ճամբէն չխոտորիլ, և ծուռ դատաստանով իր մտաց մէջ վճիռ չկտրել :

Եւս բանիս մէջ յաջողելու համար նախ պէտք է գիտնալ՝ որ ինչ և իցի մտաց դատաստան կ'ըլլուի չորս պարագայի մէջ . Ա . Ուրիշի յայտնի կամ ծածուկ գործոցը և խօսիցը վրայ : Բ . Ուրիշի խորհրդոցը, կամ ըսեմ՝ դիտմանը վրայ : Գ . Դատաստան ընողին անձին կամ իրեն մերձակայից դէմ եղածին կամ ըլլալիքին վրայ : Դ . Բոլորովին իրմէն օտար վիճակի անձանց և իր գիտցածէն դուրս օտար նիւթերու վրայ :

Ուստի երբ ուրիշի վրայ դատաստան ընող խօսք մը կը լսես, որպէս զի կարենաս ազատ մնալ ծուռ դատաստան ընելէն, պէտք է աղէկ մը քննես քու մտացդ մէջ թէ այն քու առջևդ դատաստան ընողին միտքը այս չորսին մէջէն որ տեսակին վրայ է : Եւս իմանալէդ ետեւ, պէտք է այն տեսակին վրայ շիտակ դատաստան ընելու համար եղած առանձին կանոնները մտացդ առջև բերես ու ըստ այնմ գատես կամ սուտ հանելով դիմացինիդ ըրած դատաստանը,

կամ տարակուսական ըլլալը ճանչնաս ,
և կամ ստոյգ՝ թէ որ յայտնի նշաննե-
րէն իմանաս թէ իրօք այդպէս է :

Հիմա մենք այս չորս տեսակին դա-
տելու կանոնները յիշելէն առաջ՝ յայտ-
նենք դատաստան ընողներուն ալ տե-
սակները : Այս յայտնի է որ ամէն
մարդու բնական է ամէն լսածին և տե-
սածին վրայ մտքին մէջէն ծուռ կամ շի-
տակ դատաստան մը ընել , ու ըստ այնմ
անոնց հաւնիլ կամ անարգել : Ասկից ի-
մացիր , ով սիրելի ընթերցող , մարդուս
խեղճութեան վիճակը . այսպիսի մեծ
գործողութիւն մը , որ միայն Ստուած
կրնայ շիտակ ընել , մարդս հարկաւու-
րուած է իր կենացը ամէն վայրկենին
մէջ ընելու , առանց կարենալու զանա-
զանել թէ արդեօք ծուռ է թէ շիտակ
ըլլածը , և ինքը զամէնքն ալ շիտակի
տեղ կ'ընդունի : Ասան զի մարդս ամէն
լսածին և տեսածին վրայ երբ դատաս-
տան մը կ'ընէ , ըսել է թէ զայն կար-
ծիքը իբրեւ շիտակ կ'ընդունի . բայց այս
ալ յայտնի է՝ որ անոնց շատը , չըսեմ ա-
մէնը , այլ խիստ շատը ծուռ են : Այս
բնական ամենօրեայ մտաց դատաս-
տանին մէջ , որով կրթուած ու շիտակ
դատաստանի կանոնները գիտցողներն
ալ կը սխալին . հասկա ուր կը մնան տը-
գէտ և դատաստանի կանոն ինչ ըսել է
ամենեւին չգիտցող մարդիկ :

Արդ այսպիսի շարունակական և ընդ-
հանուր մարդկութեան սխալմունքէն
ինչ կը հետեւի : Ահա ամէն օր աչքեր-
նուա առջև կը տեսնենք . կրնանք ըսել
թէ աշխարհիս երեսը ամէն տեսակ խռու-
վութեանց , չփութութեց , անհանգըս-
տութեանց , տարաձայնութեանց սկըգ-
բնական պատճառն է այս մտքերնուս
բանիլը , այս ամէն վայրկենի ըրած դա-
տաստաննիս : Անոր համար է՝ որ որչափ
կրթուած ըլլայ մէկ գերդաստան մը ,
մէկ ընկերութիւն մը , մէկ ազգ մը , այն-
չափ աւելի խաղաղ և հանգիստ կ'ըլլայ :
Արդ հետեւ որչափ աւելի կրթուի մարդ-
կանց միտքը այնչափ պակաս կ'ըլլան ծուռ
դատաստաններուն թիւը , և այնչափ ա-
ւելի կը պակսին խռովուէ պատճառները :

Արդ ուզեցինք իմանալ թէ այս դա-
տաստան ընողները , որ են ամէն մար-
դիկ , քանի տեսակի կրնան վերածուիլ :
Անոր մէջ երկու կերպ բաժանմունք կայ .
մէյմը ընդհանուր երկուքի կը բաժնուի
տգէտ մարդիկ և իմաստուն մարդիկ , ու
րոնց մտաց դատաստանը իրարմէ տար-
բեր են : Արկրորդ տեսակ բաժանմունքն
է՝ ուրիշի գործողը վրայ դատաստան ը-
նելու իշխանութիւն ունեցող մարդիկ ,
և առանձին մարդիկ :

Այս մարդկային մտաց ամէն դա-
տաստաններուն և դատաստան ընողնե-
րուն տեսակները ճաննալէն ետեւ , հի-
մա սկսինք մէկիկ մէկիկ ասոնց վրայ ե-
ղած ամէն գիտելիքներն ալ միտք առ-
նուլ :

Ինչուան հիմա ըսածներնէս կը հաս-
կըցուի թէ դատման խորհուրդը՝ մար-
դուս այնպէս բնական է , որ առանց ա-
նոր մարդս մարդ չըսուիր : Տեսածին և
լսածին վրայ դատաստան ընելը մտաց
կարողութեան գլխաւոր գործողութիւնն
է . մարդս ուզէ չուզէ իր միտքը կը բա-
նի և տեսածին և լսածին վրայ դա-
տաստան կ'ընէ : Բայց ըստ ինքեան
այնպիսի գծուար գործք է շիտակ դա-
տաստան ընելը , որ եթէ կարելի ըլ-
լար՝ ամէն մարդու վրայէն պէտք էր
վերցընել այս իշխանութիւնը . որն որ
այնպէս վտանգաւոր է , ինչպէս սուր
դանակ մը՝ մէկ տարուան տղու մը ձեռ-
քը : Ասկայն որովհետեւ կարելի բան
չէ այդ ընելը , անոր համար մարդկու-
թեան ամենեւն առջի կարեւոր գործքն է
ջանալը՝ որ գոնէ ամէն մարդ բանաւու-
րութիւննին բացուելուն պէս , ամէն
բանէն առաջ ինքզինքնին և իրենց ստեղ-
ծողը ճանչնալու ատեն՝ սովորին ըստ կա-
րի ամէն կարեւոր զգուշութիւնները ը-
նելով՝ ճանչնալ թէ շատ վտանգաւոր
գործք է դատաստան ընելը , և գրեթէ
անհնարին է ամէն պէտք եղած զգու-
շութիւններն ընելէն ետեւ դարձեալ
չսխալիլ :

Արդ մարդուս միտքը բանել սկսելուն
պէս ըրած դատաստաններուն գլխաւոր
և առջիններն են ուրիշներուն յայտնի

կամ ծածուկ գործողը, խօսիցը և գրուածողը վրայ : Այս դատաստանը կ'ըլլայ կամ անձամբ տեսնելով, կամ եղած և կարծուած պարագայներէն մակաբերելով, և կամ ուրիշէն լսելով : Այս բանիս մէջ սխալելու վտանգին թիւը թէ քանի՞ կը հասնի՝ չմբռնուիր որ ըսեմ : Այս դատաստանս շիտակ ընելու համար՝ նախ պէտք է հաւաստել թէ այն տեսած, լսած և կամ մակաբերած գործքը շիտակ են կարծածիդ պէս . և որչափ դժուար, գրեթէ անհնարին բան է զայդ որոշելը : Այս սակայն այդ բաւական չէ դատաստան ընելու համար . վասն զի ատոնց խելք հասցընելէն ետեւ, պէտք է այս ալ գիտնալ թէ այն գործքը որուն վրայ որ դատաստան կ'ուզես ընել, ինչ վախճաններով կրնայ ըլլուի՝ որ դու չես ալ գիտեր : Այս ալ զանազանելը խիստ դժուար ըլլալէն ետքը, բոլորովին անհնարին բան մըն ալ այն է՝ գիտնալը թէ այն մարդը ինչ վախճանաւ գործեր է կամ ըսեր է : Այս ալ աւելի անհնարին կ'ըլլայ գիտնալը, եթէ դու անձամբ չես տեսած կամ լսած՝ այլ ուրիշին խօսքին վրայ հաստատուած կ'ուզես դատաստան ընել . որովհետեւ այն ատենը բոլոր իմաստութիւնդ և աշխատանքդ և թափանցող միտք ունենալդ անօգուտ են՝ շիտակ դատաստան ընել կարենալու համար : Սոսն զի առջի դժուարութիւններուն վրայ կ'աւելնայ ուրիշ ամենամեծ դժուարութիւն մը, իմանալու թէ արդեօք այն քեզի պատմողը որչափ փոփոխելով կը հասկըցընէ քեզի եղածը : — Ահա այսչափ և այս պիտի դժուարութիւնները մէկդի թողուցած՝ եթէ մարդ մը նստի ամէն վայրկեան դատաստան ընելու մէկուն մէկաւ ինչ գործքերուն և խօսքերուն վրայ, կրնան տարակուսիլ այն մարդուն սխալմունքի մէջ ըլլալուն վրայ :

Ստածէ ուրեմն հիմա եթէ մէկ ինչ և իցէ տեսակ ընկերութեան մը մէջի անձինքը ընելու ըլլան այսպիսի անհնարին եղած բանը իբրեւ ճշմարտութիւն, ինչ խռովութիւն և ինչ մեծ շփոթութիւն չըլլար այն ընկերութեան մէջ :

Այս ըսածնիս դեռ մէկ տեսակն է : Սխալ դատաստանի նստողը այս ընելէն ետեւ, երբ զինքը զգաստացընող մը չըլլայ, կը սկսի ուրիշներուն խորհրդօցը վրայ ալ իշխել : Եւ որ վրայ պարագտեղը չերկնցընեմ, սուրբ Վրոց խօսքը բաւական ըլլայ յայտնելու՝ որ անկարելի է չսխալելը այս դատաստանիս մէջ . կ'ըսէ իմաստունը . “Չուր խոր է խորհուրդ սրտի առն” , “Այս սակայն ընկերութեան մէջ սովորական գործ մըն է ուրիշի խորհրդօցը և դիտմանը վրայ դատաստան ընելը՝ ուզելով որ ամէնքը ընդունին ճշմարտութեւ տեղ . տես թէ որպիսի անհնարին խռովութեւ պատճառ է այս այսպէս սովորական եղած դատաստանը : Այս այս ալ բաւական չէ :

Երրորդ պարագայի մէջ եղած դատաստանն որ ըսինք, ասոնցմէ աւելի հաստատուն և որոշ է . որուն սխալական ըլլալն ալ աւելի յայտնի է, որովհետեւ իր անձին կամ իր մերձակայից դէմ եղած կամ ըլլալիքներուն վրայ է : Ս'վէ այն մարդն որ բնական լուսով կարենայ շիտակ դատաստան ընել իր անձին և իր մերձակայից դէմ եղած կամ ըլլալու գործոց կամ խօսից վրայ, և սակայն այս ոչ միայն սովորական, այլ և իրաւացի և արդար սեպուած գործք մըն է ընկերութեան մէջ :

Հապա ինչ պիտի ըսես չորրորդ դատաստանին՝ որ է իր վիճակէն դուրս տար անձանց, և իր գիտցածէն դուրս տար նիւթերու վրայ : Որչափ որ սովորական է ընկերութեան մէջ այս դատաստանը, այնչափ ալ յայտնապէս ամէն մարդ կը վկայէ ասոր խիստ սխալ ըլլալուն :

Ահա այսպիսի սովորական գործ մըն է այս մտաց դատաստանը այսչափ պարագայներու մէջ՝ որ մարդս կը յօժարի միշտ ընելու իբրեւ բռնադատուած՝ ի բնութենէ, և միշտ ալ սխալ է ըրածը . Եսկից հասկըցիր ազգի մը և ընկերութեան մը ինչ վիճակի մէջ գտնուիլը՝ քանի որ մարդկանց խելքը չէ պառկած

այս իրենց բնական և սովորական եղած գործոյն փնտրակարու թեանը . ու երբ կը տեսնես զանոնք խռոված ու շփոթած իրար անցած , ամենեւին մի զարմանար և ամենեւին ալ մի կարծեր թէ այս կամ այն ճամբով , այս տեսակ կամ այն տեսակ գիտութիւն սովորեցընելով կարենաս խաղաղցընել զանոնք :

Եւ մէկ հատիկ կարելի հնարքն է հասկըցնել թէ այս դատաստաններուն ամէնն ալ ծուռ են : Եւս բանիս մէջ որչափ աւելի կարենաս յաջողիլ , այնչափ աւելի գիտցիր որ մարդկան ընկերութեան յաջողութեան դուռները կը բացուին , և խաղաղութիւնը կը թագաւորէ միայն ան ատենը :

Հիմա այս բանս լրածիդ պէս , սիրելի ընթերցող , կարելի է մտքէդ անցընես՝ թէ այս մէկ դիւրին բան մըն է . որովհետեւ արդէն ամէնքը գիտեն այս դատաստաններուն սխալ ըլլալը : Եւս արդարեւ գիտեն ամէնքը և կը հասկընան , ինչպէս դու ալ , որ թերեւս առաջուց չէիր անդրադարձած , հիմա հասկըցար : Եւս եթէ ճիշդ խօսիլ ուզենք՝ այդ հասկընալ չէ . և թերեւս դու ալ որ կը լսես , ես ալ որ կը խօսիմ , դեռ մենք ալ ինչպէս որ պէտք է չեն հասկըցած . վասն զի խօսքերնիս ամէն մարդու վրայ է , իսկ այս մարդկային դատաստանին ծուռութիւնը հասկըցողները , որոնց մէջ մենք ալ ենք , եթէ քննեն իրենց միտքը , կը տեսնեն՝ որ ամէն մարդու վրայ չեն հասկընար : Հիմա պիտի զարմանաս թէ արդեօք մարդիկներուն մէջէն զիվ ազատ կը սեպենք այս սխալմունքէն . արդեօք թագաւորները , իշխանութեան վրայ եղողները , արդեօք իմաստունները , կամ թէ արդեօք հոգեւոր ուսուցիչները , թէ այդպէս կը փնտռես , շատ հեռու կը պտըտիս . ասոնց և ոչ մէկը ազատ կը սեպենք : Հիմա եթէ լսես , պիտի հաւտալդ չգայ : Եւս սրտաւ դատաստանէն ազատ սեպուողներու մէջ ամէն տեսակ մարդ կայ խիստ իմաստունէն սկսեալ վերջին տգէտը . կայսրներէն և թագաւորներէն սկսեալ ինչուան վերջի անարգ գերին :

ամենաբարի մարդէն ինչուան ամենէն չարագործը . ասոնց ամենուն մէջն ալ անսխալ սեպուածներ կան : Խեղք չը պառկելու բան մը կ'երեւայ այս ըսածս , որ մէկ կողմանէ ամէնքը վկայեն ամէն տեսակ յայտնի նշաններով ընդհանուր մարդկային դատաստանին սխալ ըլլալը , և մէկալ կողմանէ ալ հաւաստի ըլլայ թէ մարդիկ սխալական ըլլալին ամէն մարդու համար չեն հասկընար :

Եւս այս երեցած հակասութեան պատճառը հասկըցնելու համար , սիրելի ընթերցող , ես քեզի կը հարցնեմ . Դու հաւաստի ես հիմա թէ ամէն մարդիկ կը սխալին իրենց դատաստանին մէջ . կ'ըսես թէ Եւս : Ուրեմն ես քեզի հիմա զայս ալ կը հարցնեմ : Հապա դու ալ մարդ չես . դու կ'ընդունիս որ քու մտաց դատաստաններուդ մէջ սխալական ես ուրիշներուն հետ հաւասար : Գիտեմ որ չես ընդունիր . մէկէն կը սկսիս ըսել՝ թէ այս այն բաններուն մէջ ըրած դատաստանս խիստ շիտակ են , բայց ուրիշներուն խեղքը չհասնիր , կամ չեն ուզեր հասկընալ . պատճառ չպակսիր ուրիշներուն սխալելուն վրայ : Ուրեմն կը տեսնես թէ քու կարծիքդ այս է՝ որ ամէն մարդ իրենց դատաստաններուն մէջ սխալական են , բայց 'ի քեզմէ . ուրեմն կը տեսնես թէ քու վիճակակից մարդկանց մէջէն դու անսխալ ես եղեր : Եւս դու ինչ կը կարծես . միայն դու ես այսպէս անսխալ դատաստան ընող . եթէ այդպէս համարիս , ահա դոնէ այդ դատաստանիդ մէջ մեծապէս կը սխալիս : Եւս գիտցիր որ՝ ինչպէս դու միայն զքեզ սխալ դատաստան ունեցողներուն կարգէն դուրս կը հանես , այսպէս ալ չէ թէ միայն ուրիշ քանի մը հոգի ալ կան այդպէս իրենց սխալական ըլլալին չընդունող , այլ և աշխարհիս ամէն մարդիկ այդ քու կարծեացդ վրայ են : Եւս զայս ալ մի կարծեր թէ անոնք զքեզ ալ անսխալ կը սեպեն . վասն զի անոնք ալ քու բնութեամբ մարդիկ ըլլալուն , իրենք իրենց վրայ նոյն համարմունքն ունին , ինչ որ դու քու վրայ :

Եւ այսպէս մինչդեռ կը հաստատէինք՝ թէ աշխարհիս մէջ ամէն մարդու դատաստանը սխալական է, հիմա կը տեսնենք որ աշխարհիս մէջ սխալական մարդ չկայ. որովհետեւ ամէն մարդու եթէ հարցնես իրեն ինչպէս ըլլալը, ամենէն ալ քու տուած պատասխանդ կը լսես: Եւ ինչ կը հետեւի. այն՝ թէ որչափ ալ որ աշխատինք, ինչ հնարքներ ալ որ բանեցնենք, ինչ և ինչէն կերուծեան մը մէջ եղած շփոթութիւնները չենք կրնար վերջացնել. որովհետեւ չենք կրնար որ և ինչ մարդու մը հաւատացնել թէ իրենք իրենց դատաստանին մէջ շատ անգամ կը սըխալին:

Եւ այդ զայս լսելով դու հիմա գուցէ կ'ըսես՝ թէ ահա ես կ'ընդունիմ որ ես ալ մարդ եմ, կրնայ ըլլալ որ իմ դատաստանիս մէջ շատ անգամ սխալիմ. ուրեմն ես այդ սխալական ըլլալին չընդունողներուն թուէն չեմ. և կը հաւատամ որ ուրիշ շատեր ալ կը գտուն ինծի պէս մտածողներ: — Եւ այդ գիտցիր զայս ալ՝ որ չէ թէ միայն ուրիշ շատեր, այլ և ամէն մարդիկ ալ այդ կարծեաց վրայ են. ամէնքն ալ ընդհանուր մարդկանց դատաստանը սխալական է ըսելու ատենին կ'ընդունին: Թէ իրենք ալ անոնց թուոյն մէջն են: Եւ ինչպէ՞ր որ մարդուս միտքը շատ վարպետորդի է, ինքզինքը միշտ եղի պէս ջրոյն երեսը հանելու համար. տես ահա ինչ մեծ հնարագիտութիւն կը գործածէ այս բանիս մէջն ալ. երբ ընդհանուր կը խօսի, ինքզինքն ալ մէջը կը համարի. բայց երբ առանձին նիւթի մը վրայ դատաստան ընել պէտք կ'ըլլայ, այն ատենը իր սխալական ըլլալը կը մոռնայ, միտքը բոլորովին կը զբաղի ուրիշներուն սխալականութեւն վրայ: Եւ որ համար շատ լաւ կ'ըլլար որ դու հիմա ինքզինքդ սովորական մարդկանց թուէն դուրս հանելով քու դատաստաններդ անսխալ կարծելի, որ այն ատենը գիւրին կ'ըլլար զքեզ համոզել՝ թէ մարդ ըլլալովդ դու ալ ուրիշներուն պէս սըխալական ես. բայց հիմա գէշն այն է

որ դու զքեզ սխալական կը խոստովանիս, անոր համար պէտք եղած ժամանակը երբ կը հաւնիս քու մտացդ դատաստանին, ամենեւին պատճառ հասկընալ չես ուզեր, ըսելով թէ « Եւ կը ճանչնամ իմ սխալական ըլլալ, ուստի այս կարծիքն ալ եթէ սխալ եղած ըլլար, ես չէի պնդեր բայց դիմացիններուս խելքերնին կարճ ըլլալով, և իմ պատճառներուս խելքերնին հասնելով, կարծեն թէ այս բանիս մէջն ալ սխալ դատաստան կ'ընեմ. Եւ որպիսի գեղեցիկ տրամաբանութիւն ախ սխալական եմ կ'ըսես, և ետքը կը դառնաս կ'ըսես՝ թէ ես կը ճանչնամ թէ որ բանին մէջ սխալ է իմ մտաց դատաստանս և որ բանին մէջ չիտակ. և այսպէս քեզի սխալ երեցածին սխալ է կ'ըսես, և չիտակ երեցածին վրայ կը պնդես թէ չիտակ է. այդ ըսել է թէ քու ճանաչմունքդ ամենեւին սխալական չէ, քու դատաստանդ միշտ չիտակ է:

Եւ հա այսպիսի խորամանկ հնարագիտութեամբ ինչպէս դուն, այսպէս ուրիշ ամէնքն ալ մէկ կողմանէ կ'ըսեն՝ թէ սխալական է մտքերնուս դատաստանը, մէկալ կողմանէ ալ պնդած հատատուն կը կենան իրենց մտաց դատաստանին վրայ. ամէնքն ալ պատրաստ զիրար խրատելու, իրարու ճանչցնելու սխալական ըլլալին իրենք զիրենք օրինակ բերելով և ըսելով՝ « Եւ ես այս պիտի սխալ կարծիք մը ունենայի, և եթէ ինձ ըսէին, մէկէն կարծիքէս ետ կը կենայի, որովհետեւ կը ճանչնամ թէ մեր մտաց դատաստանը շատ անգամ կը սխալի. Եւ այսպէս կ'ըսեն ամէն մարդիկ ընդհանրապէս, ու ամէնքն ալ իրենց մտաց դատաստանին վրայ անփոփոխ կը կենան:

(ՄԵՏՏՏՆՆ ՈՒՐԻՇ ԱՆԳՈՐ)